

« ԿԱՐԴԱՆԱԼՔ » ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԼՔ

Թեմա՝ « Ես և շրջակա աշխարհը » առարկայում անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդներն ու նպատակները

Ուսուցիչ՝ Երևանի Յ. Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց

Խուրշուդյան Լաուրա Գառնիկի

Ղեկավար՝ Մարինե Մանուկյան

ԵՐԵՎԱՆ - 2023

Ներածություն

Հանրակրթության պետական չափորոշի համաձայն սահմանված են « Ես և շրջակա աշխարհը » առարկայի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները , նպատակներն ու մեթոդները: Մանկավարժական բոլոր մեթոդներն ու հնարներն օգտագործվում են նաև այս առարկայի դասապրոցեսում: Սակայն միայն այդքանը բավարար չի , հարկավոր է հաշվի առնել առարկայի առանձնահատկությունները: Քանի որ այն երեխաներին նախապատրաստում է հետագայում ավելի յուրզ գիտելիքների յուրացմանը՝ դպրոցական հումանիտար և քնագիտական առարկաներից : Այս ամենին հասնելու համար հարկավոր է նախապատրաստական աշխատանքների միջոցով մուտք գործել թեմա՝ օգտագործելով յուրահատուկ մեթոդներ :

՝ « Ես և շրջակա աշխարհը » առարկան ունի մեկ այլ կարևոր առաքելություն՝ սոցիալական հմտությունների խթանում , վարքագծի և ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորում ու դաստիարակություն : Այս նպատակին հասնելու համար հարկավոր է ժամանակակից մեթոդների համադրում և հաղորդակցական միջավայրի ստեղծում :

Դասընթացին պետք է ուղեկցեն դիտումները , էքսկուրսիաները , փորձերը , հարցադրումներն ու բանավեճերը, որոնք թույլ են տալիս ինքնահաստատվել:

« Ես և շրջակա աշխարհը » առարկայի նպատակները ուղղորդում են կրթելուն և դաստիարակելուն , որի արդյունքում ձևավորվում է ժամանակակից երեխան՝ իր վառ երևակայությամբ և ազատ գործունեությամբ :

Զարժե մերժել հինը , զինվել ու առաջնորդվել ժամանակակից բարեփոխումների շրջանակներում ամրագրված մեթոդներով , պահանջներով :

Փոխվել են աշխարհը, հասարակությունը և մարդը , իսկ այս առարկան ուղեկցում է աշակերտին:

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները «Ես և շրջակա աշխարհը» առարկայում

Տարրական դասարաններում դրվում են մարդու կրթության ու դաստիարակության հիմքերը և, որքան կայուն ու հիմնավոր դրվեն այդ հիմքերը, այնքան ամուր ու կատարյալ կլինի դրանց վրա բարձրացող հետագա ամբողջական կառույցը: Այս տարիքում երեխաները տեղեկություններ պետք է ստանան բազմաթիվ գիտությունների, արվեստի տարբեր ձևերի մասին, որպեսզի նրանց մեջ բազմակողմանի հետաքրքրություններ արթնանան դեպի շրջակա աշխարհը, դեպի մեզ շրջապատող առարկաներն ու երևույթները: Հենց այդ հետաքրքրություններով ու հարցասիրությամբ էլ պայմանավորված է երեխաների հետագա մտավոր զարգացումը, նրանց մեջ հակումների ձևավորումը, դեպի այս կամ այն գիտությունն ու աշխատանքը, արվեստն ու մասնագիտությունը հետաքրքրությունների ստեղծումը: Այս առումով էլ միջառարկայական կապերի խելացի ու ճիշտ օգտագործումը հատուկ արժեք է ստանում ոչ միայն դասերը հետաքրքիր, հաճելի և ուսանելի դարձնելու, այլև երեխաների մեջ որոշակի հակումների ձևավորման ու մասնագիտական կողմնորոշման տեսակետից:

Բնությունն իր պես-պես գույներով ու ձայներով, իր բազմազան առարկաներով ու երևույթներով բացառիկ կարևոր տեղ է գրավում «Ես և շրջակա աշխարհը» առարկայում: Բնությունն ու բնագիտական հասկացությունները, որպես ճանաչողական ու դաստիարակչական հարցեր, ընկած են «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նյութերի թեմատիկ խմբավորումների հիմքում:

Ինչպես գեղարվեստական, այնպես էլ գործնական բնույթի նյութերի զգալի մասը, երբեմն նույնիսկ թեմատիկայից անկախ, առկա են գրեթե բոլոր նյութերի թեմատիկ խմբերում և հնարավորություն են տալիս երեխաներին կապել բնության հետ, զգալ տալ բնության անկրկնելի գեղեցկությունները, հաղորդակցվել գեղեցիկի հետ: Բնությունն իր բոլոր դրսևորումների մեջ էլ գեղեցիկ ու առինքնող է, անհրաժեշտ է միայն տեսնել, զգալ այդ գեղեցկությունը, երեխաներին բացատրել,

հասցնել այդ գեղեցկության էությանը և դեպի այն տանող ճիշտ ճանապարհը, որպեսզի նրանք կարողանան առանց միջնորդ օղակի էլ հասկանալ այդ բնությունը, սիրել այն, սովորել նրանից, ապրել նրանով... Ահա այս առումով տարրական դասարանների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասերին գրեթե միշտ առկա պետք է լինի բնությունն ու բնության մասին եղած գիտությունը: Նախ այն երեխաների ներաշխարհը պետք է թափանցի գեղեցիկի ճանապարհով, զգացմունքների, հույզերի ու ապրումների միջոցով, իսկ ապա նաև ճանաչողության, գիտության, ըմբռնման ու յուրացման ճանապարհով, որպեսզի բնությունը հազար թելերով կապվի երեխայի կյանքի հետ, այն դարձնի հաճելի, գեղեցիկ ու երջանիկ:

Բնությանը վերաբերող նյութերի ուսումնասիրությունը պետք է անպայման կապվի բնության հետ՝ ամենից առաջ կենդանի բնության դիտման, բնության հետ անմիջական շփման ձևով, իսկ ապա նոր դիաֆիլմերի ու նկարների ցուցադրման միջոցով:

Բնության, առարկաների, երևույթների ու բնագիտական հասկացությունների վերաբերյալ ոչ միայն երեխաներին ճանաչողական, նկարագրական տեղեկություններ պետք է տալ, որոնք, անկասկած, կարևոր ու անհրաժեշտ են դրանք բազմակողմանիորեն ուսումնասիրելու, տարբերակելու ու մտապահելու համար, այլև մատչելի գիտական բացատրություն պետք է տալ՝ ասածը փաստերով հիմնավորելու, ասածի մեջ երեխաներին համոզելու համար, որը նույնպես անհրաժեշտ ու պարտադիր է: Ուսուցչի տված այս բնագիտական բացատրություններն ու գիտական տեղեկությունները խստորեն պետք է համապատասխանեն տվյալ գիտության ժամանակակից պահանջներին, որպեսզի սխալ պատկերացումների պատճառ չդառնան: Հետագայում չխանգարեն այդ գիտության համակարգված դասընթացի ուսումնասիրմանն ու յուրացմանը:

Բնագիտական տվյալներն ավելի շատ անհրաժեշտ կլինեն երկրորդ դասարանի նյութերի ուսումնասիրման ժամանակ, որտեղ կան «Ընտանի և վայրի կենդանիներ» կամ «Մարդու օգնականները» նյութերի թեմատիկ խմբերը, բազմաթիվ կոնկրետ նյութեր այս կամ այն կենդանու ու բույսի վերաբերյալ, սակայն նման նյութերի, երեխաները կհանդիպեն նաև մյուս դասարաններում, որտեղ նույնպես անհրաժեշտ տեղեկություններ պետք է տրվեն՝ ոչ միայն այս նյութերի

ուսումնասիրությունը լիարժեք դարձնելու, այլև միջառարկայական կապերի օգտագործման առումով:

Այսպիսով, «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասերին բնության ու բնական գիտությունների տվյալների օգտագործման պահանջը գրեթե միշտ էլ եղել է, որովհետև տարրական դասարաններում այս առարկան իր մեջ ամփոփում է բոլոր մյուս գիտությունների տվյալները, և դա ոչ միայն մեծապես նպաստում է այդ գիտությունների վերաբերյալ տարրական տեղեկությունների հաղորդմանը, այլև, որ ավելի կարևոր է գիտելիքների և վարքագծի ձևավորման առումով:

Աշխարհի սովորաբար անվանում ենք Երկիր մոլորակը, որը մարդկության ու նրա ստեղծած բազմաթիվ քաղաքակրթությունների բնօրրանն է: Աշխարհը ճանաչելու յուրաքանչյուր մարդու պարտականությունն ու երազանքն է, և այդ պրոցեսն սկսվում է նրա ծննդյան օրվանից և անդադրում շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում, մինչև վերջին օրը: Աշխարհի ճանաչումն ամենից առաջ սեփական շրջապատի, մեր ապրած միջավայրի ճանաչումն է, նրա զգալն ու վերապրելը, որ սկսվում է սեփական օջախից, բնակավայրից, շրջանից ու հանրապետությունից, մինչև պետությունը, ամբողջ երկրագունդն ու տիեզերքը... Եվ այդ ճանաչողության սահմաններն սկիզբ ունեն, սակայն վերջ չունեն, որովհետև աշխարհն անընդհատ իր նորանոր գաղտնիքներն է բացում աշակերտների համար, սակայն միշտ էլ մինչև վերջ անճանաչելի ու անընդգրկելի մնալով: Այն, ինչ մենք սովորեցնում ենք յուրաքանչյուր նոր սերնդի, դա ոչ միայն աշխարհի ճանաչման տվյալ ժամանակի մակարդակն է, հազարավոր սերունդների փորձով ու գործով ձեռք բերված ճշմարտությունը, այլև բանալի է աշխարհը նորովի ճանաչելու, նրա գաղտնիքները բացահայտելու, նրա անսահման ու անսպառ գանձերին վերահասու լինելու համար: Այս առումով աշխարհը իր բազմապիսի գույներով ու ձայներով, ձևերով ու դրսևորումներով մեր սովորած ու ուսուցանելիք բոլոր գիտությունների մեջ է:

Տարրական դասարանների «Ես և շրջակա աշխարհը» առարկայում բազմաթիվ ու բազմապիսի նյութեր կան աշխարհի մասին՝ նրա տարածքների կամ մակերևույթի ձևերի, նրա գեղեցիկ հատվածների, տարվա տարբեր եղանակների, նրա բուսական ու կենդանական աշխարհի, նրա քաղաքների ու գյուղերի,

պետությունների և աշխարհամասերի, նրա տարածքում ապրող տարբեր ցեղերի, ժողովուրդների ու ազգությունների, նշանավոր մարդկանց ու այդ աշխարհի վրա կատարված նշանավոր իրադարձությունների մասին: Այլ կերպ ասած՝ ինչպես էլ որ շուտ գանք, ինչի մասին էլ որ խոսենք, աշխարհը մեր հիմնական թեման է, և աշխարհի ճանաչումը մեր հիմնական նպատակն է, մեր ծգտումը, մեր գլխավոր ցանկությունը:

Աշխարհն ու աշխարհի մասին եղած գիտելիքները երեխաների համար ոչ միայն շատ մատչելի են, այլև գրավիչ ու հետաքրքրող, ուստի դրանք պետք է տալ փոքրիկ, չափավորված միավորներով, որպեսզի բուն նյութը ուշադրությունից դուրս չմնա՝ մանավանդ, եթե անհրաժեշտ է լինում այդ ընթացքում օգտագործել ցուցադրավող նյութեր՝ քարտեզներ, նկարներ և այլն, որոնք երբեմն ավելի հեշտ ու ճիշտ են մեկնաբանում նյութը, ավելի արագ պատկերացում տալիս հասկացության մասին, սակայն նաև ավելի շուտ են գրավում երեխաների ուշադրությունը:

Երկիրն ու նրա ձևը, նրա շարժումն իր առանցքի և արեգակի շուրջը, երկրի կամ հորիզոնի կողմերը, տարվա եղանակներն ու դրանց առաջացումը, երկրի մակերևույթի ձևերը և բազմաթիվ ու բազմապիսի այլ հասկացություններ անհրաժեշտ են ոչ միայն առաջադրված նյութերը լավ հասկանալու և ըմբռնելու, այլև աշխարհի լավ ու բազմակողմանի ճանաչման, երեխաների խոսքի ու մտածողության զարգացման համար, որը ուսուցման հիմնական նպատակներից մեկն է: Իսկ դրան մեծապես կարող են նպաստել ժամանակակից ուսուցման մեթոդներն ու հնարները, գիտահետազոտական ֆիլմաշարերը:

Պատմական բնույթի նյութերը պահպանվել ու կան բոլոր դասարանների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասագրքերում՝ առանձնապես չորրորդ դասարանի դասագրքում, որտեղ հիմնական թեմատիկան ժողովրդի անցյալի, անցած ուղու և այսօրվա ու վաղվա պատմությունն է:

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն է ուղղված պատմական տարրական գիտելիքների հաղորդումը: Հիմնականում նպատակ ունի երեխաների մեջ ճիշտ ձևավորելու ժամանակի ըմբռնումը՝ մի բան, որը ուսուցման հիմնական նպատակներից մեկն է: Ժամանակի ըմբռնումը կամ ժամանակի ճիշտ զգացողության կարողության մշակումը աշակերտի և ընդհանրապես մարդու համար

անփոխարինելի նշանակություն ունի՝ մատուցված նյութը ճիշտ հասկանալու, նկարագրված գործողություններն ու գործող անձերը տվյալ ժամանակաշրջանի մեջ պատկերացնելու և նրանց գործողություններն ու արարքները ճիշտ հասկանալու, տրամաբանորեն արդարացնելու կամ բացատրելու համար: Բազմաթիվ ու բազմապիսի հարցեր միայն տվյալ ժամանակաշրջանի մեջ ու պայմաններում քննարկելիս է, որ կարելի է ճիշտ հասկանալ ու գնահատել, ժամանակից դուրս, այսօրվա չափանիշներով դրանք կարող են ճիշտ չըմբռնվել, ճիշտ չգնահատվել, որովհետև ժամանակի փոփոխությունը փոխում է դրանց նկատմամբ մեր պահանջներն ու մոտեցման ձևերը: Այս առումով ժամանակի ըմբռնման ճիշտ ձևավորումը հսկայական ճանաչողական ու դաստիարակչական նշանակություն ունի մարդու վարքագծի համար, և այն պետք է իրականացնել հետևողականությամբ ու բարձր պահանջկոտությամբ: Որպեսզի այսօրվա տանկերի, հրթիռների, գերծայնային ռազմական ինքնաթիռների ու այլ ահավոր զենքերի դարում ապրող երեխայի համար Հայկ Նահապետի նետ ու աղեղով կովելը, Վարդան Մամիկոնյանի ու նրա զորքերի հերոսական ու անձնազոհ պայքարը պարսկական փղերի դեմ, Խոյ Հակոբի խոյի մորթու մեջ մտնելով ծպտված թշնամու բանակատեղին թափանցելը հասկանալի դառնան երեխաների համար, միամիտ ու անհեթեթ չհնչեն, պետք է միջոցառումներ կազմակերպել՝ նվիրված ազգային տոներին:

Առանց այդ ընդհանուր թեմաների մասին պատմական տեղեկություններ հաղորդելու այդ թեմատիկ խմբերում զետեղված նյութերը չեն կարող լիարժեք կերպով հասկանալի ու հարազատ հնչել երեխաներին, սա շատ կարևոր ու վճռական պայման է, որը պետք է պահպանել բոլոր պատմական նյութերի ուսուցման ժամանակ: Յուրաքանչյուր կոնկրետ նյութի ուսումնասիրություն կարող է ու պետք է կապվի կոնկրետ պատմական տեղեկությունների, փաստերի կամ ցուցադրվող նյութերի օգտագործման հետ, որն անհրաժեշտ կլինի այն ավելի ճիշտ ու խորն ուսումնասիրելու, այն լիարժեք ձևով հասկանալու համար: Ամփոփիչ պարապմունքի ժամանակ, երբ պատմական տեղեկությունների վերհիշումը, ցուցադրական նյութերի առկայությունը չի կարող վնասել հիմնական նյութին, որն արդեն ուսումնասիրվել է, ընդհակառակն, այստեղ նյութերի ու տեղեկությունների առատությունը կնպաստի անցածի ամրապնդմանը: Դրանցից յուրաքանչյուրը ոչ

միայն գիտելիքների, տեղեկությունների ու պատմական ժամանակաշրջանի բավականին լավ իմացություն է պահանջում ուսուցչից, այլև հիմնավոր նախապատրաստում, նյութերի ու տեղեկությունների մանրամասն ու մանրակրկիտ հավաքում, որպեսզի հնարավոր լինի ճիշտ պատկերացում ստեղծել տվյալ ժամանակաշրջանի, նկարագրվող մարդկանց ու իրադարձությունների մասին:

Այսպիսի թեմատիկ խմբերից յուրաքանչյուրի ուսումնասիրմանն անցնելուց առաջ ընդարձակ, բովանդակալից, փաստերով հիմնավորված, իսկ երբեմն էլ ջուջադրվող նյութերով հարուստ նախապատրաստական զրույց պետք է անցկացնել ընդհանուր թեմայի շուրջ:

Պատմական այս կամ այն շրջանի, պատմական հուշարձանների, նշանավոր գործիչների, գիտնականների, զինվորականների, հեղափոխականների, գրողների, պատմական վայրերի և այլ թեմաներով երեխաների ուժերով պատրաստաված պաստառները, ֆիլմերը կամ մոնտաժները բացառիկ կարևոր նշանակություն կունենան երեխաների մեջ պատմական հասկացությունների ձևավորման, նրանց իմացած տեղեկություններն ու գիտելիքները համակարգի բերելու և դրանք կայուն մտապահելու, այլ գիտելիքների հետ զուգորդելու համար:

Ուսումնական ֆիլմերի ցուցադրումը, դեպի պատմական հուշարձաններ, պատմական վայրեր, գավառագիտական ու պատմական թանգարաններ կազմակերպվող էքսկուրսիաները, որոնք հսկայական նյութ կտան երեխաներին ինչպես ուսումնասիրվող տեքստերի բովանդակությունն իյուստրացիայի ենթարկելու, այնպես էլ հատկապես նրանց ճանաչողության սահմանների ընդարձակման, ձեռք բերված տվյալների հետազայում տեղին օգտագործելու առումով:

Պատմական բնույթի նյութերի ուսումնասիրությունը երբեմն պետք է կապել նաև պատմական դեպքերին մասնակցած մարդկանց հետ կազմակերպվող հանդիպումների հետ, որոնք հսկայական ճանաչողական ու դաստիարակչական նշանակություն կունենան երեխաների համար: Նրանց պատմածը իրենց հաղթական անցյալի մասին կհնչի ավելի հավաստի, ավելի համոզիչ ու զննական, քան ուսուցչի խոսքը կամ դասագրքում տրվածը: Այսպիսի լայն աշխատանք կարելի է կատարել հատկապես Հայրենական մեծ պատերազմին վերաբերող նյութերն

ուսումնասիրելիս՝ համապատասխան հանդիպումներ կազմակերպելով դպրոցում: Պատերազմի մասնակիցներն իրենց շքանշաններով ու մեդալներով, իրենց պարզ, անպաճույճ ու անմիջական պատմություններով երեխաներին շատ լավ պատկերացում կտան պատերազմի արհավիրքների, մեր ժողովրդի ու բանակի հերոսական հաղթանակի և խաղաղության համար մղվելիք անխոնջ ու անդադրում անյաքարի անհրաժեշտության մասին: Երբեմն այսպիսի հանդիպումները շատ ավելի մեծ ու անջնջելի տպավորություն են թողնում աշակերտների վրա՝ ոչ միայն պատկերացումների ստեղծման, այլև զգացմունքների, ապրումների վերապրման և ժամանակի ըմբռնման առումով:

Պատմական ժամանակաշրջանի մասին և ընդհանրապես ժամանակի ըմբռնման վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու տեսակետից խիստ օգտակար կարելի է համարել նաև տվյալ բնակավայրի շրջակայքում գտնվող պատմական հուշարձանների ուսումնասիրման նպատակով կազմակերպվող էքսկուրսիաներն ու փոքրիկ արշավները, որոնք կարող են նախորդել կամ հաջորդել համապատասխան նյութի ուսումնասիրմանը: Երկու դեպքում էլ դրանք միանգամայն օգտակար ու արդյունավետ կլինեն:

Պատմական բնույթի նյութերի ուսումնասիրությունը կարևոր է ինչպես գիտելիքների ու հասկացությունների, այնպես էլ աշխարհայացքի ձևավորման առումով: Մեկը մյուսին չպետք է խանգարի և չպետք է բացառի: Դրանք միևնույն նյութի մեջ տրվող, միևնույն նյութի միջոցով իրականացվող տարբեր նպատակներ և խնդիրներ են, որոնք չեն բացառում միմյանց:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները

Մարդ արարածը իր ստեղծումից ի վեր ձգտել է վերծանել բնության գաղտնիքները: Եվ անխնա օգտվել բնության տված բարիքներից: Սակայն մարդկության զարգացումը գնաց ոչ ճիշտ ճանապարհով: Մեզ շրջապատող աշխարհի ճանաչողությունը բերեց նոր աղետներ՝ ինչպիսին է օզոնի շերտի մեծացումը, գետերի հուները փոխելը, արհեստական լճերի կառուցումը և ուրիշ այլ զլորալ փոփոխություններ:

Բնությունը պահպանելու համար ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում ստեղծվեց «Ես և շրջակա աշխարհը» առարկան, որը երեխաներին ավելի գրագետ և ճիշտ տեղեկություններով է կրթում և դաստիարակում: Երեխաների հոգեբանության մեջ մտնում է, թե ինչպես պետք է վերաբերվել իրենց շրջապատող աշխարհին: Այս ամենի ճիշտ կազմակերպան դեպքում երեխան ինտեգրվում է իրեն շրջապատող աշխարհին՝ հանդիսանալով նրա անբաժան մասնիկը և ինտուիտիվ կերպով պահպանում է բնությունը:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գոր'ընթացի հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացկամության ձևավորման ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվ, լինել լիիրավ անդամ:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառում, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրական պետություն տանող

ճանապարհի առաջին քայլերը անելու, իր երկրի արժանավոր գաղափարների դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական և սարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին:
- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին:
- սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ:
- նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության: շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը:
- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն
- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորման:
- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում:
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը:

Առարկայի բովանդակային պարտադիր միջուկը

Ով եմ ես: Իմ նախասիրությունները, նպատակները, սովորությունները:
Իմ փոքր և մեծ ընտանիքը: Դերերը և հարաբերությունները ընտանիքում:
Իրավունքներ ու պարտականություններ, համակեցության կանոններ:
Մեր դասարանը: Բարեկիրթ հաղորդակցություն: Հարաբերությունները դպրոցում:
Իրավունքներն ու պարտականությունները դպրոցում: Որտեղ եմ ապրում, իմ
հարևանները: Իմ փողոցը, թաղը: Դերերը համայնքում:
Իմ քաղաքը, գյուղը: Հոգատար վերաբերմունք շրջապատի նկատմամբ:
Անկենդան և կենդանի բնություն, դրանց կապը: Շրջապատում հանդիպող բույսերը
և կենդանիները: Պահպանության կարիք ունեցող բույսեր և կենդանիներ: Բույսերը
և մարդը: Կենդանիները և մարդը: Բնության բարեկամները: Առողջ միջավայր:
Սեզոնային փոփոխությունները բնության մեջ: Սնունդ, մարզանք, հիգիենա:
Վտանգավոր սովորություններ: Ինչպես խուսափել վարակներից: Անվտանգությունը
տանը և դրսում: Երթևեկության կանոններ:
Ընկերական հարաբերություններ: Իմ իրավունքները և պարտականությունները:
Տղաների և աղջիկների փոխհարաբերությունը: Արարք և հետևանք Վարքի
կանոններ: Իմ շրջապատի մարդիկ, մարդկանց դերերը:
Աշխատանք և ժամանց: Օրվա ռեժիմ: Որոշումներ կայացնել, խնդիրներ լուծել,
կոնֆլիկտներ: Նախասիրություններ, նպատակներ: Աստղեր, Արեգակ, Լուսին,
Երկիր:

Բնությունը տարվա տարբեր եղանակներին: Բույսերն ու կենդանիները տարվա
տարբեր եղանակներին: Մարդու արձագանքը եղանակների փոփոխություններին:
Մարդու մարմնի կառուցվածքը, օրգանների համակարգեր: Զգայարաններ: Մաշկ,
մեր օրգանիզմի պաշտպանությունը: Հիվանդությունների կանխարգելում: Առողջ և
ռացիոնալ սնունդ: Մաքուր կենցաղ, կեցվածք, կոփում: Օգտակար և վնասակար
սովորություններ:

Վտանգները մեր շրջապատում: Ծայրահեղ իրավիճակներ:
Պաշտպանությունը բնական աղետների ժամանակ:

Բնություն: Երկիր մոլորակի բազմազանությունը: Երկրի մակերևույթի հիմնական ձևերը: Մայրցամաքներ, օվկիանոսներ:
Օդ, հող, ջուր: Կենդանի մոլորակ. բույսեր, կենդանիներ, մարդ
Փոխկապվածությունը բնության մեջ: Մարմիններ, նյութեր, մասնիկներ: Նյութերի բազմազանությունը, հատկությունները: Ջերմաստիճան, չափ ու կշիռ: Մարդու կախվածությունը շրջակա միջավայրից: Ինչպես է մարդը վերափոխել բնությունը:
Տնտեսություն: Ապրանքափոխանակություն, առևտուր, փող: Տնտեսությունը և բնությունը: Օգտակար հանածոներ: Բնության պահպանությունը: Բնությունը մարդու ստեղծագործություններում:

Հայաստանն իմ հայրենիքն է: Մեր պետականության խորհրդանիշները: Ազգայինպետական տոներ: Հայաստանի տեղն աշխարհում, մեր հարևան պետությունները: Հայաստանի մարզերը, քաղաքները: Հայաստանի պատմամշակութային արժեքները: Կողմնորոշում տեղանքում, հորիզոն, կողմնացույց:

Ճանապարհորդություններ վաղ անցյալում: Շուրջերկրյա ճանապարհորդություններ: Մայրցամաքների ու օվկիանոսների հայտնագործումն ու հետազոտումը: Ժամանակակից ճանապարհորդությունները օվկիանոսում, տիեզերքում:

Ժողովրդավար հասարակություն: Ընկալումների բազմազանություն:
Կարծրատիպեր: Հանդուրժողականություն, իրավահավասարություն:
Միջմշակութային հաղորդակցություն: Փոփոխությունները մարդու կյանքում:
Անհատի դերը:

Ով եմ ես

Կարողանա ներկայանալ, խոսել իր մասին, նկարագրել իր արտաքինը, նախասիրությունները, վերհանել իր և մյուսների նմանություններն ու տարբերությունները:

Կարողանա տարբերակել իր հոյզերը: Կարողանա տարբերակել զգայարաններով ստացած տեղեկությունները՝ որպես աշխարհն ընկալելու միջոց: Կարողանա որպես

առավելություն ընկալել իր և ընկերների տարբերություններն ու
առանձնահատկությունները:

Կարողանա նկարագրել տարբեր իրավիճակներում ունեցած իր հույզերը:
Կարողանա իր և ընկերների տարբերություններն ու առանձնահատկությունները
հիմնավորել որպես առավելություն: Գիտակցի, որ տարբեր զգայարաններով
ստացած տեղեկություններն օգնում են լիարժեք ընկալել աշխարհը:

Ես և իմ ընտանիքը

Հասկանա «տուն», «ընտանիք», «գերդաստան» հասկացությունները, իմանա,
որ ընտանիքները կարող են կազմով տարբեր լինել: Գիտակցի ընտանիքում դերերը,
պարտականությունները և իրավունքները:

Հասկանա փոխօգնության, փոխադարձ վստահության և հոգատար վերաբերմունքի
կարևորությունը:

Կարողանա պահպանել իր շրջապատում ընդունված համակեցության կանոնները,
հարգի և աջակցի ընտանիքի անդամներին: Հասկանա ընտանիքում իրավունքների
և պարտականությունների փոխկապվածությունը:

Կարողանա հիմնավորել համակեցության կանոնների անհրաժեշտությունն
ընտանիքում:

Կարողանա հիմնավորել ընտանիքում փոխօգնության և պարտականությունների
ստանձնման կարևորությունը: Գիտակցի ընտանիքում պարտավորությունների իր
բաժինը:

Ես և դպրոցը

Կիրառի դասարանական կանոնները: Իմանա հասակակիցների հետ
արդյունավետ հաղորդակցվելու կանոնները, համագործակցության առավելությունը,
պատրաստ լինի աջակցելու ընկերներին:

Իմանա դպրոցում համակեցության և բարեկիրթ հաղորդակցման կանոնները,
գիտակցի աշակերտուսուցիչ փոխհարաբերություններում դերերի
առանձնահատկությունները:

Կարողանա արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել
համադասարանցիների և ուսուցիչների հետ:

Կարողանա խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, պատասխանատու վարքագիծ դրսևորի շրջապատի հանդեպ:

Գիտակցի սեփական վարքագծի հնարավոր հետևանքները: Կարողանա տարբերակել այն իրավիճակները, որոնք կարող են հանգեցնել կոնֆլիկտի, նման իրավիճակներից խուսափելու համար համապատասխան վարք դրսևորել: Գիտակցելով արարքի և հետևանքների կապը՝ դրսևորի պատասխանատու վարքագիծ:

Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը

Իմանա իր հասցեն, կարողանա նկարագրել իր բնակության վայրը, շրջակայքի հիմնական կառույցները և դրանց նշանակությունը: Իմանա իր անմիջական հարևաններին: Հասկանա, որ ինքն այդ համայնքի մասնիկն է, իմանա և կարողանա կիրառել հասարակական վարքի կանոնները, պատրաստ լինի օգնել համայնքի անդամներին, տարիքով մեծերին: Կարողանա իր բնակավայրում կողմնորոշվելու նպատակով հարցեր տալ և ուղղորդվել դրանցով: Կարողանա պարզ գծապատկերների միջոցով ներկայացնել իր բնակավայրը:

Քաղաք և գյուղ

Իմանա իր բնակավայրին բնորոշ գծերը, տեսարժան վայրերը: Կարողանա հոգատար վարքագիծ ցուցաբերել շրջապատի մարդկանց, բնաշխարհի, նյութական արժեքների նկատմամբ: Կարողանա գործուն մասնակցություն ունենալ իր բնակավայրի բարեկարգմանը, ցուցաբերել շրջապատը մաքուր պահելու կարողություններ: Կարողանա ներկայացնել իր բնակավայրի նյութական արժեքները, առանձնահատկությունները: Կարողանա իր բնակավայրի բարելավմանն ուղղված առաջարկներ անել:

Բնությունն իմ շուրջ

Նախնական գիտելիք ունենա կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների առանձնահատկությունների և դրանց փոխազդեցության մասին:

Կարողանա տարբերել բնական և մարդու կողմից ստեղծված իրերը և շինությունները, անկենդան բնության տարրերը և կենդանի օրգանիզմները: Ծանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերը: Նախնական գիտելիք ունենա բույսերի կենսական ձևերի և կենդանիների հիմնական խմբերի մասին: Կարողանա ճանաչել վայրի և մշակովի բույսերը, վայրի և ընտանի կենդանիները: Իմանա բնության մեջ պահելու վարքի հիմնական կանոնները: Նախնական գիտելիք ունենա մարդու կյանքում բույսերի և կենդանիների դերի մասին: Իմանա բույսերի նշանակությունը օդի մաքրության պահպանման համար: Կարողանա թվարկել բույսերից և կենդանիներից ստացվող սննդամթերքները: Հոգատար վերաբերմունք դրսևորի կենդանական և բուսական աշխարհի հանդեպ, գնահատի բնության գեղեցկությունը: Կարողանա թվարկել կենդանի օրգանիզմներին առավել բնորոշ հատկությունները: Կարողանա տարբերակել բույսերի կենսական ձևերը (ծառեր, թփեր, խոտաբույսեր) և կենդանիների որոշ խմբերի (միջատներ, ձկներ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ, կաթնասուններ) ներկայացուցիչներին, բերի օրինակներ: Կարողանա ճանաչել նրանց իր շրջապատում կամ նկարների վրա: Իմանա բույսերի աճի համար անհրաժեշտ պայմանները (լույս, խոնավություն, ջերմություն, հող): Իմանա բուսական և կենդանական սննդի կարևորությունը իր օրգանիզմի աճի և զարգացման համար: Կարողանա ինքնուրույն դիտարկումներ անել բնության մեջ կենդանի օրգանիզմների և անկենդան բնության տարրերի միջև գոյություն ունեցող որոշ կապերի վերաբերյալ և բացատրել դրանք: Կարողանա բացատրել կենդանի օրգանիզմների միջև գոյություն ունեցող կապերը նրանց բնակեցման վայրերում: Իմանա բույսերի բազմացման որոշ ձևեր, ճանաչի իր շրջապատում հանդիպող, պահպանության կարիք ունեցող որոշ բույսեր և կենդանիներ:

Առողջություն և անվտանգ կենսագործունեություն

Նախնական գիտելիք ունենա սննդի և անձնական հիգիենայի նշանակության, սննդամթերքի ոչ ճիշտ օգտագործման վտանգների և դրանցից խուսափելու միջոցների մասին: Գիտակցի սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, մարմնամարզությամբ զբաղվելու կարևորությունը, տարբերակի առողջության համար վնասակար սովորությունները, գիտակցի մաքրակենցաղ ապրելակերպի դերը վարակներից խուսափելու համար: Իմանա տանը և այլուր հնարավոր վտանգավոր իրավիճակների և դրանց հետևանքների մասին, իմանա երթևեկության կանոնները, երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու տարրական կանոնները: Անվտանգ վարքագիծ դրսևորի՞՞ Հասկանա սեփական վարքագծի և առողջության կապը, դրսևորի պատասխանատու վարքագիծ: Կարողանա կողմնորոշվել տանը և դրսում ստեղծված վտանգավոր և արտակարգ իրավիճակներում:

Կարողանա օգտվել կենցաղային անվտանգ կառավարվող սարքերից: Կիրառի անձնական հիգիենայի կանոնները, դրսևորի կամային հատկանիշներ առողջության համար վնասակար սովորություններից զերծ մնալու համար:

Հասկանա, որ մարդը բնության և հասարակության մասնիկ է, զանազանի մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային տարբերությունները: Հասկանա, որ անձնային որակները պայմանավորված չեն սեռով: Կարողանա գնահատել իր և մյուսների հաջողությունները, համագործակցել, ընդունի համակեցության կանոնները: Կարողանա պաշտպանել սեփական իրավունքներն ու շահերը և գիտակցի իր պարտականությունները: Կարողանա տարբերակել արարքներն ըստ հնարավոր հետևանքների, ունենա պատասխանատու վարք: Կարողանա բացատրել մարդու՝ բնության և հասարակության հետ փոխկախվածությունը և օրինակներ բերի: Հասկանա սեռային որոշ կարծրատիպերի պայմանական լինելը, օրինակներ բերի: Կարևորի ընկերական հարաբերությունների դերն իր կյանքում, կարողանա ուսումնական գործընթացում և խաղերի ժամանակ ստեղծել փոխօգնության և վստահության հարաբերություններ դասընկերների հետ: Գիտակցի իրեն շրջապատող մարդկանց

տարբեր դերերի փոխկախվածությունը, հասկանա դրանց կարևորությունը, կարողանա օրինակներով հիմնավորել: Հասկանա, որ փոխօգնությունը, համագործակցությունը և վստահության վրա հիմնված հարաբերությունները փոխշահեկան են, կարողանա բացատրել դա:

Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը

Կարողանա կազմակերպել իր առօրյան. օրվա ռեժիմ կազմել, պլանավորել իր ժամանակը և գործունեությունը, տարբերակել աշխատանքը ժամանցից, իմանա՝ ինչպես կազմակերպել հանգիստը: Պատկերացում ունենա կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու և որոշում կայացնելու վերաբերյալ: Կարողանա նկարագրել իր նախասիրությունները, հետաքրքրությունները, նպատակներ ուրվագծել և դրանց հասնելու ճանապարհներ փնտրել: Հասկանա կազմակերպված առօրյալի կարևորությունը հաջողության հասնելու համար: Առօրյա կյանքի՝ իրեն վերաբերող տարբեր իրավիճակներում կարողանա կատարել տրամաբանական եզրահանգումներ, որոշումներ կայացնել, խնդիրներ լուծել:

Կարողանա բացատրել կազմակերպված առօրյալի և նպատակների իրականացման կապը, օրինակներ բերի: Հասկանա իր առջև ծառայած դժվարությունները և փորձի ինքնուրույն հաղթահարել դրանք:

Երկնային մարմիններ

Նախնական գիտելիքներ ունենա աստղերի, Արեգակի, Լուսնի, Երկիր մոլորակի՝ որպես տիեզերական մարմինների, մասին:

Իմանա բնության մեջ կատարվող պարբերական երևույթների մասին (գիշերցերեկ, տարվա եղանակներ): Իմանա տիեզերական մարմինների՝ Արեգակի, Լուսնի, Երկրի հիմնական բնութագրիչները՝ Կարողանա բացատրել բնության մեջ կատարվող պարբերական փոփոխությունները (տարվա եղանակներ, գիշերցերեկ):

Տարվա եղանակներ

Իմանա տարվա եղանակները և նրանց ամիսները: Գիտելիքներ ունենա տարվա եղանակներին բույսերի և կենդանիների հետ կատարվող փոփոխությունների մասին: Կարողանա նկարագրել, թե ինչպես է մարդն արձագանքում տարվա եղանակների փոփոխությանը: Նախնական գիտելիքներ ունենա բույսերի և կենդանիների սնման եղանակի, աճի և շարժունակության մասին:

Կարողանա բացատրել տարվա եղանակների հերթագայությունը, նկարագրել բույսերի և կենդանիների կյանքում տեղի ունեցող փոփոխությունները:

Կարողանա բնության մեջ դիտումներ կատարել, կազմել հերբարիումներ:

Իմանա շրջակայքում իրականացվող բնապահպանական միջոցառումների մասին:

Կարողանա բնության մեջ կատարած դիտարկումների հիման վրա կազմել պոլուսակներ:

Մեր առողջությունը

Իմանա մարմնի մասերը, պատկերացում ունենա մարդու օրգանների, զգայարանների, նրանց հիգիենայի մասին: Պատկերացում ունենա օրգանիզմի համար մաշկի ամբողջականության և մարմնի հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտության մասին: Կարողանա խուսափել մաշկի ամբողջականության խախտման պատճառ հանդիսացող իրավիճակներից:

Իմանա վերքերի, կոտրվածքների, այրվածքների, ցրտահարության, արևահարության մասին:

Նախնական գիտելիքներ ունենա որոշ վարակիչ հիվանդությունների և դրանց կանխարգելման միջոցների մասին: Կարողանա ցույց տալ մարդու օրգանները, թվարկել որոշ օրգանների համակարգերը:

Իմանա զգայարանների անհրաժեշտությունը մարդու համար:

Իմանա լայն տարածում ունեցող վարակիչ հիվանդությունների ախտանիշները և դրանցից խուսափելու ուղիները: Իմանա որոշ օրգանների համակարգերի ֆունկցիաները:

Կարողանա կողմնորոշվել և առաջին օգնություն ցուցաբերել վերքերի,

արևահարության, ցրտահարության, այրվածքների դեպքում:

Կարողանա բացատրել հիվանդությունների կանխարգելման նշանակությունը:

Անվրանգությունը մեր շրջապատում

Իմանա տարբեր վտանգավոր իրավիճակների մասին, իրազեկ լինի բնական աղետների (երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ) մասին, իմանա դրանցից պաշտպանվելու կանոնները, կարողանա կիրառել դրանք: Նախնական գիտելիքներ ունենա ծայրահեղ իրավիճակներում, աղետների ժամանակ կողմնորոշվելու և վտանգից խուսափելու համար: Հասկանա արտակարգ իրավիճակներում խուճապի վտանգավորությունը, գիտակցի ինքնատիրապետման կարևորությունը և փոխօգնության անհրաժեշտությունը: Կարողանա բացատրել վտանգ պարունակող իրավիճակները, մեկնաբանել դրանց հնարավոր հետևանքները և կարողանա համապատասխան վարքագիծ դրսևորել:

Բնությունը և մարդը

Իմանա, թե ինչպես է մարդը վերափոխել շրջակա աշխարհը, նախնական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության և իր կյանքում բնության դերի մասին: Իմանա տնտեսության գլխավոր ճյուղերի մասին:

Իմանա ապրանքափոխանակության և փողի նշանակության մասին:

Իմանա, թե ինչ են օգտակար հանածոները, դրանց ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը: Նախնական գիտելիքներ ունենա բնության

աղտոտվածության, աղբի կուտակումների հետևանքների մասին: Ծանոթ լինի բնությանը նվիրված ստեղծագործությունների:

Կարողանա ուսումնական իրավիճակում իրականացնել ապրանքափոխանակություն և առևտուր: Կարողանա օրինակներով հիմնավորել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից

Կարողանա ներկայացնել տնտեսության և բնության միջև գոյություն ունեցող կապը:

Կարողանա հիմնավորել բնական պաշարների ռացիոնալ օգտագործման անհրաժեշտությունը:

Իմանա կենցաղային թափոնների երկրորդային մշակման մասին: Կարողանա մեկնաբանել, թե ինչպես բնահամակարգերում որևէ օղակին հասցրած վնասը կարող է խաթարել ողջ համակարգը: Մեկնաբանի, թե ինչպես է մարդու գործունեությունն ազդում բնության վրա: Կարողանա մեկնաբանել բնության հանդեպ իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, հասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության հասցրած վնասը բնությանը:

Մեր հայրենիքը

Ճանաչի իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, իմանա պետական օրհներգը: Կարողանա թվարկել Հայաստանի մեծ քաղաքները, լճերը, գետերը, լեռները, հարևան պետությունները, կարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա: Ծանոթ լինի հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նշանակալի որոշ իրադարձությունների, գործիչների, նախնական գիտելիքներ ունենա իր հայրենիքի պատմության ու մշակութային հուշարձանների մասին: Իմանա ազգայինպետական տոների մասին: Կարողանա տարբերակել ժամանակագրական միավորները (տարի, հարուրամյակ և այլն): Կարողանա բացատրել հայրենիքի նշանակությունը իր կյանքում: Իմանա Հայաստանի մարզերը, մարզկենտրոնները, կարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա:

Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ

Ունենա շրջակայքում կողմնորոշվելու նախնական գիտելիքներ և հմտություններ, կարողանա առարկաների օգնությամբ կողմնորոշվել տեղանքում Իմանա, թե ինչ է հորիզոնը, հորիզոնագիծը, հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը Կարողանա արևի օգնությամբ որոշել հորիզոնի կողմերը: Իմանա հին ժամանակներից մինչև մեր օրերը երկրագնդի հետազոտության մասին: Իմանա վաղ անցյալում փյունիկեցիների, հին հույների, հռոմեացիների կատարած ճանապարհորդությունների մասին: Իմանա շուրջերկրյա ճանապարհորդությունների մասին: Ունենա քարտեզից օգտվելու նախնական գիտելիքներ և հմտություններ Կարողանա կողմնացույցով որոշել հորիզոնի կողմերը, կողմնորոշվել տեղանքում:

Կարողանա բացատրել նոր մայրցամաքների հայտնագործման, դրանց հետազոտման, շուրջերկրյա ճանապարհորդությունների իրականացման դրդապատճառները:

Նախնական գիտելիքներ ունենա տիեզերքում և օվկիանոսում կատարվող ժամանակակից ճանապարհորդությունների մասին: Կարողանա ճիշտ կողմնորոշվել և տեղաշարժվել տեղանքում պայմանական նշանների օգնությամբ

Կարողանա տեղանքի օբյեկտների միջոցով որոշել հորիզոնի կողմերը:

Կարողանա բացատրել վաղ անցյալում կատարված ճանապարհորդությունների ազդեցությունը մարդկության զարգացման վրա: Կարողանա ինքնուրույն տեղեկություններ հավաքել երկրագնդի և տիեզերքի ժամանակակից հետազոտությունների վերաբերյալ:

Ես և հասարակությունը

Նախնական գիտելիքներ ունենա մարդկանց լեզվական, մշակութային, ռասայական, տարիքային, սեռային և այլ տարբերությունների և դրանցով պայմանավորված ընկալումների բազմազանության մասին: Իմանա հասարակական վարքի կանոնները, իր իրավունքներն ու պարտականությունները:

Հասկանա կարծրատիպերի և նախապաշարումների վտանգը և կարողանա օրինակներ բերել: Բացատրի մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, բարեկամության և խաղաղության կարևորությունը, կարողանա պահպանել համակեցության կանոնները: Կարողանա հիմնավորել ընկալումների բազմազանությունը հարգելու անհրաժեշտությունը:

Կարողանա օգտվել մարդու, հասարակության և շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

Արժեքային համակարգ Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,
- գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար:

Այսպիսով, մեզանից անկախ, այլ գիտությունների տվյալներն ու փաստերը ամեն օր պետք է օգտագործվեն ուսուցման պրոցեսում՝ ստեղծելով կրթության ու դաստիարակության համար այն նպաստավոր ու համընդհանուր պայմանները, որոնք անհրաժեշտ են ուսուցման ժամանակակից մակարդակի ապահովման համար: Այժմ չկա ուսումնական որևէ առարկա, որ դասավանդվի մյուս ուսումնական առարկաներից ու գիտություններից առանձնացված, ներփակ ձևով: Բոլոր գիտություններն էլ կապված են միմյանց հետ և փոխադարձ ազդեցությունների ու ներթափանցումների ռեալ ու ներթաքուն հնարավորություններ ունեն, որոնք ուսուցման պրոցեսում անպայման պետք օգտագործվեն: Ես և շրջակայի ուսուցումն սյդ տեսակետից ոչ միայն բացառություն չի կազմում, այլև փոխադարձ ներթափանցումների ավելի լայն հնարավորություններ ու պայմաններ ունի:

Եզրակացություն

Ներկա ժամանակում աշխարհը փոխվում է գլխապտույտ արագությամբ, որին հավասար տատանվում է նաև դպրոցն ու կրթական համակարգը: Երեխաները տարբեր ընտանիքներում տարբեր ձևերով ու մեթոդներով են դաստիարակվում: Արդյունքում ստացվում է մի բազմաշերտ մշակույթ, որի խարիսխը դրվում է դպրոցում՝ դաստիարակության նորագույն նախագծերի և մեթոդների ստեղծման անհրաժեշտության թելադրանքով: Փոփոխությունների այդ շղթան ստիպում է վերանայել հին արժեքները և կատարելագործել դրանք:

Անանիա Շիրակացին պնդում է, որ վատ ուսուցումը փչացնում է ոչ միայն սովորողի միտքը, այլև հոգին և բնավորությունը, և յուրաքանչյուր մեթոդ ունի դաստիարակչական առանձնահատուկ հնարավորություններ: Իսկ մանկավարժը պետք է տիրապետի այդ մեթոդներին և հմտորեն կիրառի դրանք:

Այս դասագրքի դաստիարակչական կողմի ապահովումը պետք է իրականացվի նոր և ուշագրավ մետոդներով, որպեսզի նվազի արտաքին միջավայրի վատ ազդակների ներգործության ուժը: Դասապրոցեսում երեխան պիտի դաստիարակվի անընդհատ:

Այս առարկայի առանձնահատկությունն այն է, որ արտաքին աշխարհը շատ արագ է բացվում երեխայի առջև: Եթե նախկինում երեխաները աստիճանաբար էին ճանաչում աշխարհը, իսկ այսօր SCS-ների զարգացման արդյունքում նրանց գիտելիքները չեն համապատասխանում իրենց տարիքին: Այստեղ էլ բախվում ենք երեխայի վաղ զարգացման իրողությանը: Այս առարկայի շնորհիվ երեխան ավելի հեշտ է հաղթահարում դժվարությունները:

Վերջնաարդյունքում նույն հարթակի վրա են դրվում բոլոր բաղադրիչները՝ թե գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, թե արժեքային համակարգը: Երեխան ձեռք է բերում թեմայի բովանդակությանը վերաբերող գիտելիքներ, համագործակցում է ընկերների հետ, հարստացնում է աշխարհաճանաչողական գիտելիքները, մտածում, խոսում է գրագետ:

Գրականության ցանկ

1. Ա.Ե.Տեր-Գրիգորյան «Միջառարկայական կապերը տարրական դասարաններում»
2. Ա.Ե.Տեր-Գրիգորյան «Նոր մեթոդների գործադրման անհրաժեշտությունը»
3. «Ես և շրջակա աշխարհը» դասագրքեր, ուղեցույցներ
4. Լ.Ե. Ավետիսյան «Բնությունը և երեխաների մտավոր զարգացումը»
5. Գ.Ցամաքյան, Հ.Քացախյան «Բնության ուսումնասիրման ծրագիր»
6. Կ. Բաբանսկի «Ինչպես բարելավել ուսուցման պրոցեսը »
7. Ա. Ամիրջանյան «Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը»
8. Վ.Ի. Ջագվյազովսկի « Ուսուցիչը որպես հետազոտող»
9. Ս. Տուրբովսկոյ « Մանկավարժական ազդեցության մեթոդներն ու միջոցները»
10. Նախաշավիղ «Կրթական բարեփոխումներ, դասավանդման մեթոդիկա»